ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3

ք. Երևան **«12 » հուլիսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱԱԲ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բաղալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 601,800,000 (վեց հարյուր մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 100,300,000 (մեկ հարյուր միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02578338	ՀՎՀՀ 00250339
Հ/Հ 900011025823	ՀՀ 2470100091880010
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«12 » հուլիսի 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ հազ. դրամ

NN	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
I.	**Հողային աշխատանքներ**				
1	10^{e}-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս.0,65մ^3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	2716,15	1,690	4 590,294
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով(մետ արգելափա-կոցների հատվածներում)	մ^3	749,8	6,570	4 926,186
3	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0,65մ3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լիցք 1.0կմ	մ^3	102,2	1,390	142,058
4	10^{e}-IV կարգի բնահողի տեղափոխում լիցք բուլդոզերով 10մ (հարթեցում, ջրում, խտացում)	մ^3	102,2	0,830	84,826
II.	**Կողային առուների մաքրում**				
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	1970,8	1,690	3 330,652
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ^3	218,9	6,570	1 438,173
III.	**Կողնակ**				
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով	մ^2	39362,5	0,019	747,888
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով (մետ արգելափակոցների հատվածներում)	մ^2	7498	0,340	2 549,320
IV.	**Երթևեկելի մաս**				
1	Ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ և վերադարձ սեփականատիրոջը	մ^2	92317	0,855	78 931,035
2	Փոսային նորոգում h=3-5սմ	մ^2	334	5,200	1 736,800
3	Փոսային նորոգում հիմքով. - խիճ h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2 - խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ^2	1524	10,650	16 230,600
4	Հարթեցնող շերտ ա/բետոնե խառնուրդով $h_{միջ}$ =3սմ	տ	1952,5	47,018	91 802,645
5	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ^2	92317	5,599	516 882,883
V.	**Իջատեղեր**				
1	10eIV կարգի բնահողի քանդում էքս. 0,65մ^3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^3	128,74	1,700	218,858
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ^3	14,3	6,570	93,951
3	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ^2	1 485,57	4,500	6 685,065

4	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1.56մ3 խիճ (20-40)-5.46մ3 խիճ (10-20)-3.12մ3 խիճ (5-10)-1.56մ3 խիճ (0-5)-3.9մ3 (ավազ) ջուր-1.1մ3	$մ^2$	1209,59	1,248	1 509,568
5	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	$մ^3$	7,53	5,957	44,856
6	Խողովակի ջրամեկուսացում	$մ^2$	190,93	1,754	334,891
7	d=530 մմ խողովակի տեղադրում (7մմ)	գծմ	107	100,500	10 753,500
8	d=273 մմ խողովակի տեղադրում ((5մմ)	գծմ	15	24,710	370,650
9	Խողովակի միացում վաքի հետ միաձույլ բետոնով B-20, F100	$մ^3$	0,126	112,520	14,178
VI.	**Ջրահեռացում երթևեկելի մասից**				
1	Գոյություն ունեցող հավաքովի Ճ-2-20-50, Ճ2-20-75 վաքերի և ջրթողերի մաքրում բերվածքներից , բարձում ա/ի վրա ձեռքով, տեղափոխում լցակույտ 3,0կմ	$մ^3$	102,6	6,570	674,082
2	10eIV կարգի բնահողի քանդում էքս. 0,65$մ^3$ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3,0կմ	$մ^3$	163,50	1,690	276,315
3	նույնը՝ ձեռքի աշխատանքով	$մ^3$	18,17	6,570	119,377
4	Խճային հիմք h=10սմ	$մ^3$	55,12	5,346	294,672
5	Ճ-1-20-75 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում ամրան Φ 10A-I	$մ^3$	86,688	168,920	14 643,337
6	Ճ-2-40 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում ամրան Φ10A-I	$մ^3$	0,68	170,050	115,634
7	Ճ-5 հավաքովի բետոնե բլոկների տեղադրում ամրան Φ10A-I	$մ^3$	1,58	211,960	334,897
8	d=630 մմ կիսախողովակի ապամոնտաժում, հետագա տեղադրումով Φ25մմ A-II	գծմ	12	7,560	90,720
9	d=630 մմ կիսախողովակի տեղադրում (5մմ) ամրան Φ25մմ A-II	գծմ	65	46,800	3 042,000
10	Կիսախողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	76,162	1,754	133,588
11	Հոսքամարիչի հարթակի և հենակային ատամի միաձույլ բետոն B20, F-100	$մ^3$	3,84	74,860	287,462
12	Ջրնետիչի կառուցման և, կիսախողովակի հետ միացման միաձույլ բետոն B20, F-100	$մ^3$	2,9	74,864	217,106
VII.	**Հավաքովի ե/բ վաքեր 30 x34սմ**				
1	10eIV կարգի բնահողի քանդում էքս. 0,65$մ^3$ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3,0կմ	$մ^3$	65,0	1,693	110,045
2	նույնը՝ ձեռքի աշխատանքով	$մ^3$	7,15	6,570	46,976
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^3$	14,43	5,960	86,003
4	Հավաքովի ե/բ վաքերի 30x34 սմ տեղադրում	$մ^3$	17,76	260,190	4 620,974
5	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	279,72	1,205	337,063
VIII.	**Ջրընդունիչ և մետաղ. ցանց**				
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,5$մ^3$ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ	$մ^3$	9,0	2,050	18,450
2	Նույնը՝ ձեռքով կողքի կուտակումով	$մ^3$	2,4	5,000	12,000
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^3$	1,4	5,920	8,347

4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան & 14մմ A500c - 150.03 կգ:	մ³	5,2	128,560	671,083
5	Ցանցի իրականացում ամրան & 25մմ A500c - L=86.4 մ, P=332.9 կգ Անկյունակ L 100x10մմ - L=30 մ, P= 366.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=45.6 մ, P=556.32 կգ	կգ	1 342,2	0,881	1 182,764
6	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	18,0	1,205	21,690
7	Հետլիցք ձեռքով	մ³	2,4	1,710	4,104
IX.	**Անվտանգության էլեմենտներ**				
	Նշագծում (Լուսանդրադարձնող ներկով)				
1	Նշագծման ընդհանուր մակերեսը 2858.4 մ² այդ թվում՝				
	հոծ գիծ 1.1	կմ	4,37	47,879	209,231
	ընդհատվող գիծ 1.5	կմ	4,91	33,300	163,503
	ընդհատվող գիծ 1.6	կմ	1,65	43,020	70,983
	ընդհատվող գիծ 1.7	կմ	0,17	38,160	6,487
	հոծ գիծ 1.2.1	կմ	21,336	47,879	1 021,546
	ընդհատվող գիծ 1.2.2	կմ	0,864	34,920	30,171
	Նշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում, այդ թվում՝ - նախազգուշացնող - առավելության - հատուկ թելադրանքի - տեղեկատվության - լրացուցիչ տեղեկատվության	հատ	94	32,830	3 086,020
2	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	29	4,483	130,007
	Արգելափակոցներ				
1	Մետ. արգելափակոցների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	68	2,010	136,680
2	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	600	24,270	14 562,000
3	Ե/բ ուղղորդ սյունների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	77	4,133	318,241
4	C-1 տիպի պլաստիկ ուղղորդ սյունների տեղադրում	հատ	123	5,850	719,550
X.	**Ե/բ d=1.0մ խողովակների նորոգում**				
1	Հունի մաքրում մուտքում, ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 3կմ հեռ. վրա	մ³	21,7	6,570	142,569
2	Նույնը՝ խողովակի մեջ	մ³	5,3	6,570	34,821
3	Հող. աշխ-ներ գլխամասի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով , բարձում ա/ի և տեղ. լցակույտ 3կմ	մ³	1,3	6,570	8,541
4	Նույնը՝ կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	11,56	5,000	57,800
5	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ	մ³	0,61	5,950	3,630
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20, F100 - հիմք - 6.0 մ³ - իրան - 7.61 մ³	մ³	13,61	112,520	1 531,397
7	Վաքի կառուցում ելքում միաձույլ բետոնից B20, F100	մ³	2,4	83,770	201,048
8	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ³	11,56	1,710	19,768
9	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով - բետոն	մ²	26,9	1,205	32,415
XI.	**Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում**				

1	Հունի մաքրում մուտքում, ելքում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 3կմ հեռ. վրա	մ^3	53,7	6,570	352,809
2	Նույնը՝ խողովակի մեջ	մ^3	35,1	6,570	230,607
3	Հող. աշխ-ներ գլխամասի փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով , բարձում ա/ի և տեղ. լցակույտ 3կմ	մ^3	5,8	6,570	38,106
4	Նույնը՝ կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ^3	2,9	5,000	14,500
5	Գլխամասի ուղղորդ թևերի իրանի կառուցում միաձույլ բետոնից B20, F100	մ^3	5,8	69,610	403,738
6	Գլխամասի պարապետի կառուցում միաձույլ բետոնից B20, F100 (4հատx3մ=12մ)	մ^3	2,88	110,080	317,030
7	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով	մ^3	2,9	1,710	4,959
8	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով - բետոն	մ^2	14,5	1,210	17,545
XII.	**Ե/բ կամուրջի նորոգում կմ 25+906-ում (սխեման 1x9 մ, գաբարիտը 10.0)**				
1	Երթևեկային մասի քայքայված ա/բ ծածկի կազմատում էքս. 0.5 շտ, բարձումը ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. Վրա:	մ^3	24,5	2,405	58,923
2	Նույնը՝ ձեռքով	մ^3	6,1	7,858	47,934
3	Т-1-1.0 հավաքովի մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	մ^3	5,44	21,060	114,566
4	Գոյություն ունեցող բազրիքների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը:	տ	0,525	33,480	17,577
5	Քայքայված կարգավորիչ թևերի կազմատում էքս. 0.5 շտ, բարձումը ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. Վրա:	մ^3	7,3	2,405	17,557
6	Հենարանի և կարգավորիչ պատի երկայնքով խրամուղու փորման հողային աշխատանքներ 10^{e}IVգրունտում էքս. 0.5 շտ, տեղափոխում բուլդոզերով մինչև 25 մ հեռ վրա, բարձում ա/ի էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	մ^3	11,7	3,800	44,460
7	Նույնը՝ ձեռքով կողքի կուտակումով:	մ^3	3,3	6,000	19,800
8	Հենարանի և կարգավորիչ պատի վրա խարսխային ձողեր տեղադրելու համար անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=25 սմ (8 հատ ուղղահայած):	հատ	84	2,282	191,688
9	Հենարանի և կարգավորիչ պատի վրա ամրանային խարիսխների տեղադրում &16 A500c , L_1=45 սմ: էպոքսիդացեմենտային շաղախ - 0.022 մ^3:	տ	0,073	589,510	43,034
10	Հենարանի և կարգավորիչ պատի «շապիկների» տակ ավազակոպճային շերտի տեղադրում - h=10 սմ:	մ^3	1,46	7,133	10,414
11	Հենարանների ուժեղացման «շապիկի» միաձույլ ամրանավորված բետոն B20: Ամրան - &12 A500c - 816.2 կգ:	մ^3	61,20	85,780	5 249,736
12	Խրամուղիների հետլիցք ձեռքով կողքի կուտակված գրունտով՝ շերտ-շերտ տոփանումով:	մ^3	3,30	2,050	6,765
13	Ռիգելների եզրերի աճեցում միաձույլ բետոնով - 0.75x0.75x0.8 մ:	մ^3	1,80	78,870	141,966

14	N1 հենարանի ռիգելի և N2 հենարանի վերանորոգում M200 մակնիշի ցեմ. շաղախով b=5 սմ: Ամրանային ցանց - Ø3 (100x100):	մ^2	76,3	5,514	420,718
15	Մոտեցումներում պահարանային պատերի և անցումային սալերի տեղադրման համար փոսորակների փորման հողային աշխատանքներ էքս. 0.5 շտ, որպես 10eIV գրունտ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա:	մ^3	142,3	2,454	349,204
16	Նույնը՝ կողքի կուտակումով հետագա հետլիցքի համար, նաև գաբիոների չբավարարող հետլիցքի համար (8 մ^3):	մ^3	80,9	1,159	93,763
17	Նույնը՝ ձեռքով:	մ^3	24,0	6,000	144,000
18	Պահարանային պատերի իրականացման համար հենարանների վրա անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=25 սմ:	հատ	58	2,282	132,356
19	Պահարանային պատերի իրականացման համար հենարանի վրա ամրանային խարիսխների տեղադրում &16 A500c , L_1=45 սմ: էպօքսիդացեմենտային շաղախ - 0.016 մ^3:	տ	0,0412	593,210	24,440
20	Պահարանային պատերի տակ ավազակոպճային շերտի տեղադրում - h=10 սմ:	մ^3	1,2	7,133	8,560
21	Պահարանային պատերի միաձույլ ամրանավորված բետոն B20: Ամրան - &10 A500c - 338.0 կգ:	մ^3	20,40	97,480	1 988,592
22	Տապաստների բլոկների տակ խճային բարձիկի իրականացում:	մ^3	18,7	8,030	150,161
23	Л-1 մակնիշի հավաքովի տապաստի բլոկների ե/բետոն: չափ. 50x63x330 սմ, քաշը - 2.5 տ, ա.պ. AI=24.2 կգ/մ^3, AIII=79.3 կգ/մ^3:	մ^3	2,0	266,870	533,740
24	Л-4 մակնիշի հավաքովի տապաստի բլոկների ե/բետոն: չափ. 50x63x565 սմ, քաշը - 4.3 տ, ա.պ. AI=19.9 կգ/մ^3, AIII=75.5 կգ/մ^3:	մ^3	3,4	234,210	796,314
25	Л-5 մակնիշի հավաքովի տապաստի բլոկների ե/բետոն: չափ. 50x63x456 սմ, քաշը - 2.5 տ, ա.պ. AI=18.8 կգ/մ^3, AIII=87.8 կգ/մ^3:	մ^3	2,82	236,290	666,338
26	Տապաստի բլոկների մոնոլիտացման B25 դասի ե/բետոն: ա.պ. AI =22.2 կգ/մ^3:	մ^3	1,03	80,920	83,348
27	Անցումային սալերի տակ ավազակոպճային նախապատրաստում:	մ^3	9,45	7,133	67,407
28	П1-4 անցումային սալերի հավաքովի ե/բետոն. չափ. 25x98x400 սմ, քաշը - 2.35 տ, ա.պ. AI=27.5 կգ/մ^3, AIII=52.3 կգ/մ^3:	մ^3	28,2	256,477	7 232,651
29	Անցումային սալերի միավորման ե/բետոն ա.պ. AI=19.0 կգ/մ^3, (մանր խճով բետոն - B25):	մ^3	1,7	134,420	228,514
30	Գրունտի հետ շփվող տեղամասերի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ^2	83,1	1,292	107,365
31	Գրունտի հետլիցք բուլդոզերով կողքի կուտակված գրունտով խտացում պնևմատոփանով, շերտ-շերտ ջրի լցաբաշխումով:	մ^3	87,20	0,990	86,328
32	Նույնը՝ ձեռքով:	մ^3	9,7	2,050	19,885

33	Երթևեկային մասի և անցումային սալի վրա B20 դասի թեթև բետոնի իրականացում - հմիջ=17.5:	մ²	155,40	9,242	1 436,207
34	Հարթեցնող շերտի իրականացում B25 դասի մանրահատիկ բետոնով - h=3 սմ:	մ³	7,7	74,282	571,971
35	Դեֆորմացիոն կարերի իրականացում:	գմ	30,0	27,287	818,610
36	Ջրամեկուսացման իրականացում երկշերտ իզոգամով:	մ²	279,9	0,686	192,011
37	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ անվահրիչի բլոկների տեղադրման համար - h=1սմ:	մ²	10,8	0,705	7,614
38	Մայթերի անվահրիչների ԲP-1 բլոկների հավաքովի ե/բետոն -B30, F200 չափ. 60x75x300սմ, քաշը՝ - 1.375տ, ա.պ. AI=27.58 կգ/մ³, AIII=158.2 կգ/մ³: Պողպատե խողովակներ d=76մմ, L=2 մ:	մ³	3,3	509,530	1 681,449
39	Ամրանավորված պաշտպանիչ բետոնի իրականացում միաձույլ բետոնով երթևեկային մասի սահմաններում - H=7սմ - W8, B30; ամրանային ցանց - Ø4 (100x100) - 92 մ²:	մ³	6,44	128,600	828,184
40	Նույնը անցումային սալերի սահմաններում - H=4սմ- W8, B30: Ամրանային ցանց - Ø4 (100x100) - 105 մ²:	մ³	4,2	148,700	624,540
41	Ամրանավորված պաշտպանիչ բետոնի իրականացում միաձույլ բետոնով (W8, B30) մայթերի սահմաններում - $H_{միջ.}$=11սմ; ամրանային ցանց - մ4 (100x100) - 41 մ²: Ներդիր դետալներ. - 24 հատ 10x150x200մմ, F=0,72մ², P=0,0576 տ; Ø14 A500c - L=29 մ, P=0,0327 տ:	մ³	4,63	172,950	800,759
42	Ներքին շերտի մանրահատիկ ա/բետոն H=5սմ:	մ²	100,0	5,600	560,000
43	Վերին շերտի մանրահատիկ ա/բետոն H=4սմ:	մ²	20,0	4,550	91,000
44	Նոր պողպատե բազրիքների տեղադրում՝ նախնական ներկաստառումով և ներկումով: Ուղղանկյուն խողովակ 50x30x2.5, L=47.04 մ, 40x30x2.5, L=73.85 մ, 40x20x2.5, L=2.64 մ:	տ	0,3225	745,120	240,301
45	Մայթերի ավազային ասֆալտ h=4 սմ	մ²	18,0	4,800	86,400
46	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	13,5	0,770	10,395
47	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	40,0	0,053	2,120
48	Գաբիոնների համար փոսորակի փորման հողային աշխատանքներ 0.65մ³ շերեփ տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով- 10 eIV:	մ³	72,2	0,845	61,009
49	Նույնը՝ ձեռքով	մ³	8,0	6,000	48,000
50	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:	մ²	28	0,408	11,424

51	Գաբոնային շարվածք 1x1x0.5 (քար): Հիմնակմախք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ 100 հատ **1230/319.8 գմ/կգ** Ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ^2=1.445 կգ, 1 հատ=4 մ^2 100 հատ **400/578 մ^2/կգ** Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ,1հատ=1.2գծմ, 1 հատ=0.0665 կգ 88 հատ **105.6/5.86 գմ/կգ** մետաղյա ձող d=18մմ,1գծմ=1,998կգ, 1հատ.=1,0մ 14/28 հատ/կգ	մ^3	50,0	23,200	1 160,000
52	Գաբոնային շարվածք 1x0.5x0.5 (քար) : Հիմնակմախք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=9.3գծմ 24 հատ **223.2/58.03 գմ/կգ** Ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ^2=1.445 կգ, 1 հատ=2.5 մ^2 24 հատ **60/86.7 մ^2/կգ**	մ^3	6,0	26,560	159,360
53	Հետադարձ լիցք բուլդոզերով կողքի պահեստավորված գրունտով շերտ-շերտ տոփանումով:	մ^3	80,0	0,990	79,200
54	Նույնը՝ ձեռքով:	մ^3	8,2	2,060	16,892
55	Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով:	մ^2	100,0	0,023	2,250
56	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	100,0	0,563	56,300
57	Խիճ h=12սմ բիտումի տարածումով 4,12/1000մ^2	մ^2	100,0	3,225	322,500
58	Ներքին շերտի մանրահատիկ ա/բ ծածկ h=6սմ	մ^2	100,0	6,652	665,200
59	Վերին շերտի մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ^2	20,0	5,600	112,000
				Ընդամենը	**824 377,067**

*Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 2470100091880010

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 12 » հուլիսի 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 3
Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 160 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Կողնակների իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Վաքերի տեղադրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Ջրահեռացման իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Ջրընդունիչներ մետաղական ցանցով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
8	Հավաքովի ե/բ D=1.0 մ խողովակների նորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
9	Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո,

			բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
10	Կմ 25+906-ում կամրջի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
11	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 160 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 160 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 2470100091880010

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 12 » հուլիսի2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
3	**45231177/30**	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	---	---	---	---			355,062,000.0	355,062,000.0	355,062,000.0	601,800,000.0	601,800,000.0	601,800,000.0	601,800,000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր փ.39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00250339
ՀՀ 2470100091880010

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1

« » 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/8Շ-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն